

ՅԱՄԱՀԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴԻ

Դպրոցական ֆոնդի համար մինչև
օրս Թիֆլիս քաղաքում և մասամբ
թեմում ժողովւէ են հետևեալ գու-
մարները.

1) Թիֆլիսի վաճառականները իրենց
աւագ պ. Ա. Միլեանի ձեռքով ստո-
րագրել են 5583 ր. և տօների առթիւ
և էջմիածին գնացած պատգամաւո-
րութեամբ Նորին Սրբութեան Ներ-
կայացրել այդ գումարը նւիրել են 95
վաճառական:

2) Առաջնորդի մօտ հոգած մատեա-
նում 16 հոգի ստորագրել են 3068 ր.
80 կոպ.:

3) Յատուկ թէրթերով քաղաքից և
թեմից ստացւել է 1747 ր. 76 կ.՝
Սակայն թերթերի մեծ մասը գեռ չեն
վերադարձած, որպէս զի հսարաւոր
վինի ամբողջ գումարի քանակը որո-
շել թերթեր ստացւել են հետևեալ
անձերից և հաստատութիւններից.

Յովհաննեան զպ. ուսուցչական խմբից
44 ր. 50 կ., Յովհաննեան զպ. հոգա-
րաբառութեան անդամներից 100 ր.,
Քորլայ գաւառի Ախալքալակի գործ.
Ղարաղաջ գ. 40 կ. Քանուրել գ. 24
ր. 87 կ., Վերին-Աղդան գիղի դպրո-
ցի վարչութիւնից և հասարակութիւ-
նից 51 ր. 50 կ., Արշակ քահ. Յա-
րութիւննեանի միջոցով 12 ր., Շամ-
շաղինի գործ. Յովհ. քահ. Քաղականի
միջոցով 50 ր., Ներսէս քահ. Քարի-
մեանցի միջոցով 26 ր. 50 կ., Գրի-
գոր աւ. քահ. Մանգակունու միջոցով
21 ր., Սահակ աւ. քահ. Սահակեանի
միջոցով 12 ր., թժ. Բ. Աղասարեանի
միջոցով քժիշիներից 90 ր., Թիֆլիսի
ժողովարանից 200 ր., Գարբիէլ Յու-
րիննեանից 25 ր., Եղբ. Բողարշեանների
ծխախոտի գործ. ծառ. և բանտորներից
28 ր. 80 կ., Գէորգ աւ. քահ. Արու-
լեանի միջոցով 15 ր. 55 ր., Գրիգոր
քահանայ Շահնազարեանցի միջոցով
101 րուր., Գր. Եարալիհանից 25 րուր.,
քաղաքիս տրամաւյի ծառայողներից
43 ր. 90 կ., քաղաքիս մեշխանների և
արհեստաւորների կողմից 78 ր. 5 կ.,
Յովհէփ աւ. քահ. Արուլեանից 5 ր.,
Բ. Փոխադարձ Վարդի Բանվի ծառա-
յողներից 80 ր., Աշոտ քահ. Թէմու-
րագեանից 10 ր., Ղևոնդ քահ. Ալի-
խաննեանի միջոցով 60 ր., Շամբուե-
ցոց ծխ. հոգարաբառութիւնից 9 ր. 50
կոպ., Միքայէլեան հիւանդանոցի ըլ-
քական խմբից 135 ր., Լազողաղի
գործակալի միջոցով 126 ր. 50 կ.,
տիկին Փեփրունիա Զարդեղեանից 200
րուր., Աղելսաննեանի գործարանի ծա-
ռայողներից և բանտորներից 29 ր. 25
կոպ., Թիֆլիսի գաւառի գործակալի
միջոցով 12 րուր. 95 կ., Յովհաննէս
Սպէնդիարեանից 25 ր., Սղնախի գոր-
ծակալի միջոցով 62 ր. 35 կ., Արաս-
թումանի ծխակ. հոգարաբառութիւնից
18 ր. 54 կ., քաղաքիս ս. Կարապետ
հկ. զպ. ուսուցչիներից 13 ր. 50 կ.
Առաջնորդ թեմի՝
Մեսրոպ եպիսկոպոս

Վենետիկի ՄիհիթԱրեանց ՎԱՆՔԻՆ
ՄԷՋ

Վենետիկի և ածածէթեանց թեմին
մէջ կը կարդանք —

Հայ Միհիթարեան մեծարժէք և բազ-
մանուտ Հայրելը երէկ տօնեցին մեծ
կարելորութիւն ունեցող երկու յորե-
լիհաններ, մէկը՝ 1500-րդ տարեղարձը
գիւտին իրենց գիրին, որ աղբիւրը ե-
ղաւ իրենց հարուստ զբականութեան

և 400-րդ տարեղարձը տպագրութեան,
հոս, Վենետիկի մէջ, որ միշտ սիրած
ու պաշտպանած է այս հերոս հալածա-
կանները: Առուան կանուխ կոնտոլ-
ներով Վահան հասան բազմաթիւ հրա-
ւիրախներ: Ժամը 9 ու կէսին հասան,
կառավարութեան ներկայացուցիչը Զի-
վիլիսոսի ասպետը: Քաղաքապետին
կողմէ հրամանատար Սքարբա: Քիչ
ետքը եկաւ Վենետիկի օմք: Հիւպատոս
Վիթալիս էֆ. և Քրանսական հիւպա-
տոս Պառոն տը Ֆիւլէռ, Քաւալլաւի
կարտինալին փոխանորդը Բանթաէօ
եպիսկոպոսը Այս, ինչպէս նաև միւս
բոլոր հրաւիրեանները Միհիթարեան
Հայրերուն կողմէ ընդունեցան և գա-
ցին շնորհաւորել Վանքին Արբանայը
գերապատիւ կիւրեղեան արքեպիսկո-
պոսը: Ժամը տասնին կոնտոլով եկաւ
Մատրիտի գրսունէն, Խշանանունի Ռո-
հանը, Ընկերակցութեամբ իր պատույ
տիկնոջ և իրմէն անբաժանելի խար-
շիկ հետեւորդին: Անկեզօծ մեծ սրահին
մէջ տեղի ունեցաւ նւագահանդէսը,
մասնակցութեամբ Վենետիկի ընտիր
երաժշտագէտներուն, Երգւեցան Հայ-
կական ազգային երգեր, որոնց եղա-
նակը խանդավառեց բոլոր ներկանները:
Հայր Տայեան կարդաց հայ լեզով պղ-
գային տաղ մը, ուրկէ բառ մը իսկ
չհասկցանք. Ներեցէք մեր տգիտու-
թեանը — բայց մեզի թարգմաննեցին, և
հասկցանք թէ ուղղաւած էր Արիական
յեղին, որուն ազնիւ մէկ ճիւղն է հա-
յութիւնը և ուղղաւած մեր Վենետիկին,
զոր երկրորդ հայրենիր մը կը նկատեն: Հայ
Տայեան բուռն ծափեր խլեց: Յե-
տոյ դաշնակի վրայ, ջութակի ընկե-
րակցութեամբ գեղեցիկ կտորներ նւագ-
ւեցան: Բայց այս հանդէսին «քլուն»
եղաւ Հայր Կարապետ Տէր Սահա-
կանի իտալերէն լեզով խօսած
առող, որ ներմ ծափահարութեան մէջ
վերջացաւ: Այս ճառէն ետք այցելու-
թիւն մը կատարեւեցաւ Գանձարանը: Իրապէս զանձ կրնանը ըսնել հոն զըտ-
նած նիւթերուն, զորս Միհիթարեան
Հայրելը կրցած են հաւաքել վայել-
չութեան այս եղեմին մէջ: Հայր Երե-
մեան այցելունները առաջնորդեց սրա-
հին զանազան կողմերը: Եղոյ տաւա-
մինչ չըրս գարու հնութիւն ունեցող
զիրքեր: Հնագոյն գիրքն էր 1543-ին
տպած Մողական գիրքը: Տիսանը
Մոմեան, մարգարիտներով զարդար-
ւած, 2300 տարւան հնութիւն մը, զոր
1825-ին Ալի փաշայի նախարարապե-
տը հայ Եռուսուփ պէյին նակած էր: Հնու-
թիւն մէջ հայ առաջին նակած էր: Հնու-
թիւն կողմից կար Պայրընի գրիչն
ու կաղամարը: Անիի աւերակներուն
մէջն գտնած 1156 թւականը կրող
Աստւածածնայ պատկերը Թրիստոի
մասունքով, 1540-ին տպագրւած հայ
գիրը մը և գորգի, օթոցներու նման
բազմաթիւ հնութիւններ, ինչպէս նաև
Տպարանին մէջ հայ առաջին Ալղա-
րարը օրագիրը, որ 1794-ին տպւած է:
Ժամը 2-ին Մատրիտի գրսունէն մեկ-
նեցաւ, ուրկէ ետք վանքին սեղանա-
տան մէջ հարիւր հոգիի սեղան մը
տրւեցաւ: Բանախօսութիւններ տեղի
ունեցան, խօսեցաւ հայր Բարսեղ Սար-
գիսեան, որ ողջունց իտալիան իրը
իր երկրորդ հայրենիրը: Ենաոյ խօսը
առին, Բանտալէօն եպիսկոպոս, Բայա-
սի կոմսը, Բրոֆ. Կամպիէս, Բրոֆ.
Յակոբոս Պալլարին, և Գրիգոր Արտե-
մեան: Կարապետ Չորպահեան, Բրոֆ.
Տան Կապասինէ: Այցելունները մեկնե-
ցան հանդէսին հաճոյալի յիշատակ մը
տանելով իրենց հետ:

(«Ժամանակ»)